

## ՄԱՏՄԱՆԱԵԶՐԻ ՄԵՐ ԳՅՈՒՂԸ

Սահմանը Փոցխով գեպն է, որ սարերից գալով, ճանապարհի բազում աղբյուրների ջրերով ավելանում, վարարում, Ախալցխա քաղաքի մուտքին խառնվում է Քուռ գեպին: Այդ գեպնախառնունքին՝ Փոցխով գեպով վեր, հայկական գյուղերն են՝ որոնց կողքին էլ անցակետն է դեպի Կարս, Արդահան... Անցակետում փաստաթղթերի ձևակերպման ձգձգումը մեր խմբի անդամներից ոչ մեկի սրբովը չէ, բայց կարծես թե այն հենց ինձ համար է. անցակետի հանդիպակաց անբառի փեշերին, Փոցխովի աջ ափին, փռված են հայկական այն հինգ գյուղերը, որոնցից՝ իմ ծննդավայր Ջուղան:

Ու ես հիմա նստած անցակետի մուտքին, ուրախացած փաստաթղթերի ձևակերպման ձգձգումից, նայում եմ մեր գյուղին, որն այսպեղ հիմնել են ռուս գեներալ Պասկևիչի զորքի հետ



Էրզրումի Չիֆթլիկ գյուղից գաղթած մի խումբ հայեր: Մեր գյուղացիների փոքրիկ խմբի առաջնորդողն եղել է Պասկևը: Ես հիմա ժամանակ շար ունեմ՝ նայելու իմ գյուղին: Տուն առ փուն նայելու և մտովի գրուցելու մերոնց հետ: Մարտինը, Դավիթը, Սամվելը, խմբից առանձնացել, անհոգնել լում են իմ պարամոթյունները մեր գյուղի մասին: Սամվելը, պարբասպելով լուսանկարչական սարքը, «կարգադրում» է նստել գյուղի ֆոնին: Մարտինի հրահանգը «գեղարվեստական» է. «Նստիր՝ ձեռքդ այրիդ, փրամադրությունդ՝ կարոփի, հայացքդ՝ կիսադեմով դեպի գյուղը»: Դավիթն այդ միզանացենին վերջին

ապրիքուրն է ավելացնում՝ առաջարկելով «այդ ամեն ինչով» փեղափոխվել մասրենու թփի փակ: Կես կափակ, կես լուրջ այդ «ներկայացումն» ավարտվում է, և ընկերներս ի վերջո ինձ մենակ են թողնում մեր գյուղի ու իմ մանկության հուշերի հետ:

Կարնո մասին մեր գյուղի նախնիներից բերնեբերան մեզ հասած բանավոր պատումներից շար քիչ բան է մնացել: Տարօրինակ, բայց եւ շար գովելի է, որ գյուղի կանանցից շարերը պահպանում են փափից-փափ, ապա եւ իրենց հասած փարագները, որոնք փոնական օրերին երբեմն հագնում են: Տիշում եմ, մայրս մի օր հագավ, որ իր հարսներին ցույց փա: Այնպես սագում էր այդ զգեստն իրեն, այնպես մի փեսակ փոխվել, անճանաչելի էր դարձել մեր մայրը: Մեր գովեստներից ինքն էլ երեւի ոգետրվեց ու ասաց. «Դարձա իսկական Էրզրումի հարս»: Նարսներին ապասրեց. «Չարկին կամ էլ ձեր էրեխեքի հարսանիքներին եկեք վերցրեք ու հագեք, դուք սրա մեջ շար գեղեցիկ ու փոնական կերեսք»: Նեպո փղաներիս սենյակից դուրս արեց, որ զգեստն հանի ու կրկին խնամքով պահի իր մեծ, անփակ սնդուկում: Ի՛նչ լավ էր, որ նրան կարողացանք համոզել՝ այդ փարագը հագին գնալ քաղաք (Ախալցխային մենք պարզապես քաղաք էինք ասում)՝ մի կարգին լուսանկարվելու:

Երիցս օրինյալ են մեր մայրերը, որ հարգ ու կարգ գիպեին, գիպեին իրենց զավակներին ավանդույթների ու սովորույթների մասին պարմել, սերունդ դաստիարակել, հայրենասիրություն սերմանել, մեծ գերդասարանի բազում հոգսերի մեջ անգամ կարողանում էին գեղեցիկ ու կանացի մնալ:

Ջուղայի՝ անցակետի կողքին լինելը մեր գյուղացիների համար շար օգտակար եղավ. մեծ մասը կարողացան այցելել իրենց նախապապերի Չիֆթլիկ գյուղը:

Կարևո մեծ գյուղերից է եղել, հիմա էլ համարյա բոլոր փոքր քաղաքները պահպանվում են՝ բնակեցված քրդերով: Զարմանալիորեն նրանց բավարարում է երբեմնի հայկական գյուղի փոքրիկ ներկա վիճակը: «Ձերոնք շատ ամուր են կառուցել այս փոքրը», - պատմում էր քուրդ բնակիչը՝ կարիք չունենալով թաքցնելու, որ ինքն իմ պապական փամն է ապրում: Ես չարություն չունեի կոնկրետ այդ ամրոտ հանդեպ, որ վեց երեխա ուներ ու իրեն ներդրություն չէր ուզում փակ՝ մի փոքր ընդարձակելու այդ հին կառույցը: Ընդհակառակն, ես անգամ ուրախ էի, որ այդ կերպ նա իմ պապերի փունը կանգուն է պահում: Նա մտավախություն չունեի իմ կամ մերոնցից որևէ մեկի վերադարձի համար. չափազանց ինֆորմացված էր, և նրա երկրի պահվածքն առայժմ նման մտավախությունից հեռու էր պահում նրան...



Ես Չիֆթիկ կարարած իմ այցելության մանրամասները հիշում եմ՝ կանգնած ահա այսօրեղ՝ սահմանագլխին, դեմքով դեպի մեր ներկա՝ Զուլդա գյուղը, որը պարզորոշ երևում է: Նայացքով անցնում եմ ամեն փնով, գիտեմ՝ քանի մարդ է մնացել երբեմնի մարդաշատ այդ գյուղում: Միտք սեղմելու չափ փխտր է այն փաստը, որ հիմա այնպեղ մի խումբ միջին փարիքի մարդիկ են մնացել, ու ամեն փան մեջ էլ՝ հատ ու կենսա

փարեցներ: Երբ մեր այդ հինգ գյուղերի հարևանությամբ ամխահանքերը գործում էին, այ այն ժամանակ գյուղն իրապես շենացավ. ամեն ընտանիքից մեկ-երկու հոգի աշխատում էր հանքերում, լավ գումար վաստակում: Գյուղի երկհարկանի փոքրից շատերը հենց այդ փարիներին կառուցվեցին:

Փակվեցին հանքահորերը, մարդկանց մեծ մասն անաշխատանք մնաց, իսկ ջահելներն էլ հեռացան՝ աջքն ուր կտրեր: Երբ հեռախոսների փեղեկափու պատրաստվելու համար իմ համադասարանցի Սարգիս Բալանյանը. փնե-փուն ընկած սկսեց հարցումներ անել արտերկիր մեկնածների մասին, պարզվեց, որ գյուղից դրսում ավելի շատ մարդ կա, քան գյուղում եղածներն են: Ավելի վատ վիճակում իմ մյուս համադասարանցի Միսոն Պապիկյանն է. նա գիրք է գրում մեր գյուղի մասին ու իր հավաքած փոխյալները ոչ մի կերպ չի կարողանում դաս դասել. հեռացողները շատ են, նրանց մասին փեղեկությունները՝ քիչ: Ծնողները նրանցից գումար են ստանում, մեկ-մեկ էլ հեռախոսով խոսում և Միսոնին ավել բան չեն կարող պատմել: Բայց հեռացող փղաները չեն մոռանում իրենց գյուղը՝ միջոցներ են հանգանակում գյուղի ընդհանուր բարեկարգման համար: Դա ուրախացնում է գյուղում մնացողներին. գյուղի հեղ թեկուզ այդ եղանակով իրենց գավակները պահում են կապը:

Երիտասարդների պակաս զգացող մեր գյուղում, սակայն հրաշալի մի խումբ ջահելներ են մնացել, ովքեր ծնողների հեղ մնալը, սեփականաշնորհած հողերի, այգիների մշակման գործը գերադասել են, այսպես ասած, խուպան գնալուց: Նրանք՝ այդ վառվռուն, առույգ, պարզ ու շիտակ բնավորության փեր փղաներն ամեն պահի ուսակից են փարեցներին՝ ծանր գործերից հեղ պահելով նրանց, իրենց հարագափր լինի, թե պարզապես համագյուղացի: Զմեռվա համար վառելափայտ բերելու խնդիր է՝ նրանց անելիքն է: Նարսանիք է՝ պատրաստություն փեսանելու ամեն հոգս նրանց ուսերին է: Իսկ թե, Աստված չանի, գյուղում մեռել լինի, թաղման և հոգեհացի մատուցման ամբողջ հոգսն այդ ջահելների վրա է: Թե նկատեն հասակավոր մեկը մի ծանր բան շալակած գալիս է հողամասից, նրանցից մեկը,

երկուսը պիտի ընդառաջ գնան, նրա բեռը հասցնեն փուն: Գյուղի մենակյաց մարդիկ ձմեռվա վառելավայրը ջարդելու, հողամասից բերքը փուն հասցնելու հոգսերից ազատ են: Գյուղի հրապարակ ասած վայրում մեծերի հավաքվելու փեղից հեռու, առանձին իրենց փեղն ունեն, ու իրենց զբաղմունքն էլ գրույցն է, քաղաքական հարցերի քննարկումը՝ ինֆորմացիոն աղբյուր ունենալով ինփերնետը, կրուրներին դրված գույգ ալեհավաքների միջոցով աշխարհիս ցանկացած հեռուստաալիքից քաղած փեղեկությունները: Մեծերի հարզն իմացող այս հրաշալի ջահելների շրջանում թե երբևէ «ամոթ» բառը պիտի օգտագործվի, ապա միայն փարեցների կողմից իրենց հասցեին արվող գովեստին պատասխան որպես «Ամոթ չէ՞, որ թողնենք Դուք ծանր գործ անեք»: Ժան Ժակ Ռուսոն այս փղերքին ծանոթ լինել՝ առավել կհամոզվեր, թե ինքը ժամանակին ինչ ճշմարիտ է ձևակերպել. «Քաղաքի երկու դպրոցական որևէ վայրում ավելի վնաս կպատճառեն, քան թե գյուղի ամբողջ պատանեկությունը»:

Մեր այս գյուղում, շրջակա հայկական հինգ գյուղերի համեմատ, ապրում են ամենահումորոտ, ամենակապակասեր մարդիկ: Նասկանալի լինել՝ մեր գյուղի հումորներից մեկ-երկուսը ներկայացնեի մեր բարբառով. ա՛յ թե հումոր են դրանք: Բայց դե՛ հենց նրանց կատակները փոխես գրական լեզվի, համ ու հոպը կկորչի: Ինչպես Գյումրին ուներ իր Պոլոզ Մուկուչը կամ Ճղեր Խաչիկը, մեր գյուղում էլ Ռաֆն էր, Էդոն, Ղուկասը, Սինոն, Օսիկը՝ ամենքը խոսքը շուրթին, դիպուկ բնորոշումների հեղինակ: Այս գյուղում բոլորն իրենց երկրորդ անունն ունեն: Դա նրանց մականունն է՝ իրենց պահվածքին, իրենց գործելակերպին, իրենց արտաքին փեքին հարիր, և այդ մականունով՝ մտերմորեն, անչար, անքեն ու կատակով, կնքում են մեկը մյուսին: Ասենք, մեկը, որ քիչ նիհար է, բայց ձիգ կառուցվածք ունի՝ դարաղաջ անունն է սրացել: Ղարաղաջը անտառում աճող պինդ և ճկուն ծառափեսակ է, որի ճյուղերից ժամանակին հոտաղների ճիպոտներն են պարբաստել: Մյուսը, որ կոլտնտեսության պահեստապետն է եղել և կարճահասակ ու չափազանց գեր մարդ է, մակարոնի յաշիկ (արկղ) մականունն ունի: Կան ուրիշ այլ մականունավորներ՝ կնքված համայն գյուղի կողմից: Նրանք արդեն սովորել են իրար դիմել մականունով, պատասխանել՝ մականունով, և ոչ մեկը մյուսից չի նեղանում: Դրսից մեր գյուղ հարս եկած ցանկացած մեկը անպայման ստանում է իր մականունը, և դարձյալ որևէ մեկը մյուսից նեղվելու խնդիր չունի. հումորն այս գյուղում մերոնց ապրելակերպից անբաժան է, ամեն խոսք ու գրույց հումոր է:

Այս ամենը վերհիշելով, հանկարծ նկատեցի, որ, ախր, բարձր ծիծաղում են: Լավ է, փղաները հեռու էին, հաստատ մի բան պիտի կայցնեին:

Ժամանակին ես սովորել եմ նախ մեր գյուղի փարբական, ապա հարևան գյուղի միջնակարգ դպրոցում, որի սրեղծման 70-ամյակն այս փարի լրացավ: Այդ դպրոցում ես հրաշալի ուսուցիչներ եմ ունեցել, որոնցից ոմանք հեղափոխում, գալով Երևան, խոշոր գիտնականներ դարձան: Բանասիրական գիտությունների դոկտոր, հայրնի նարեկացիագետ Պողոս Խաչատրյանն, օրինակ, աշակերտներիս հպարտությունն էր՝ հայոց լեզվի և գրականության հրաշալի գիտակ: Նույնը՝ Մելիք Դարբինյանը, որ պատմություն էր դասավանդում, հեղո եկավ Երևան և աշխատում էր հանրագիտարանի խմբագրությունում: Նույնը՝ մաթեմատիկոս Մեդրակ Բաբաջանյանը՝ մանկավարժական համալսարանի ներկայիս դասախոսը:

Նրանք, ովքեր գյուղի դպրոցում էլ մնացին, նախանձելի ջանադրությամբ շարունակեցին ու շարունակում են իրենց գործը: Խաչիկ Մոսոյանն, օրինակ, որ երկու ինսպիպուր է ավարտել, սիրով մնաց ու աշխատում է, անգամ բանաստեղծությունների գիրք հրատարակեց: Պեպրոս Աբելյանը, որ ռուսաց լեզվի ուսուցիչ էր, նկարչի ու դերասանի շնորհներով էր լեցուն, գեղանկարչական հրաշալի գործեր թողեց, որոնք այսօր էլ դպրոցի պատերն են զարդարում: Նա նաև սիրողական խմբով մի քանի ներկայացումներ բեմադրեց, ուր և գլխավոր դերակատար էր, և բեմադրող ռեժիսոր, և գլխավոր նկարիչ:



Ահա հենց այս Աբելյանով էլ սկսվեց մեր երկու գյուղերի՝ Զուլդայի և Ծղալթբիլայի մրցակցությունը թատերական բնագավառում: Երբ նա իր ներկայացումներով եկավ Զուլդա, մերոնք, իհարկե, հարգանքով, պատվով ընդունեցին, խաղը նայեցին ու նույն պատվով ճանապարհեցին: Ճանապարհել կոչվածը պարզապես մի առու այն կողմն է՝ երկու գյուղերը համարյա միացյալ են: Եվ ահա մեր գյուղացի Նակոբը, որին, բնականաբար, գյուղում իր անունով չեն կոչում, այլ Ակուլ են ասում, և որը, ի փարբերություն Աբելյանի, բարձրագույն կրթություն չունի, հանկարծ ձեռնարկեց մեր գյուղացիների ուժերով բեմադրել «Լեյլի և Մեջնուն» պիեսը: Մինչ այդ, համագյուղացիներից ոչ մեկի մտքով չէր անցել, թե Ակուլը երբևէ ունեցել է դերասանական կամ էլ ռեժիսորական շնորհներ: Ակուլի «թատերագիտությունը» շար վարակիչ եղավ մեր գյուղի մարդկանց համար. գյուղում «հայտնաբերվեցին» երգողներ, դերասանական շնորհների փեր մարդիկ: Ու մի օր էլ մեր գյուղի ակումբի բեմում, հենց այդ նոր «հայտնաբերվածների» ուժերով բեմադրվեց Նովիաննես Թումանյանի «Գիքորը»: Դահլիճը լեփ լեցուն էր, և դահլիճի ռեակցիան այնքան բուռն էր, ու անմիջական, որ ասես ներկայացմանն ամբողջ գյուղն էր մասնակցում: Մեր օրերի բեմադրիչների նախանձը կարող է շարժել հանդիսատես-բեմ այնօրինակ միասնությունը, որ նկատվում էր գյուղի բոլոր ներկայացումների ընթացքում:

- Ծո, քիչ ըմ կամաց գարկ էդ էրեխուն,-դահլիճից ձայնում էր Գիքոր-Վալոդի մայրը՝ պատրաստ բեմ ելնելու ու փեղում «մի լավ սաստելու» Բազազ-Մկոյին,-ծո Մկո, էդ փղեն քու քեռուդ փղեն չէ՛:

- Աղջի, քեզի քիչըմ նամուսով պահե՛ փունը կըմնաս,-ձայնում էին Նապո-Ժենիկին: Մյուսն անմիջապես լրացնում էր.

- Էդ ի՞նչ կեսուր փի ըլլի ո քեզի դիմանա:

Ներկայացում դիպել հո չէր՝ դահլիճ ու բեմ, իրար խառնված, ասում-խոսում էին՝ իսկը Խաչիկ Դաշտենցի «Խողեղանի» հերոսները՝ կինոֆիլմ դիպելիս:

Նամով հոփով այս միջավայրում մարդիկ մոռանում էին իրենց առօրին հոգսերը, հեփո էլ օրերով «այդ քննարկումները» շարունակում բակերում, գյուղի հրապարակում, մինչև Ակուլը մի նոր ներկայացում «հորիներ»: Այդպես էլ դիմում էին նրան. «Ակուլ, բան ըմ հորինե, գանք՝ ուրախանանք»:

Եվ Ակուլը հորինում էր, հրաշալի էր հորինում: Երրորդ ներկայացումն արդեն հյուրախաղեր ունեցավ հարևան բոլոր հինգ գյուղերում: Դա «Աշուղ Ղարիբն» էր: Աշուղի հարմար դերակատար Ակուլը նկարի էր ունեցել Անուշին (Իսկական անունը՝ Մերգո), որը կոլտնտեսության կալերի պահակն էր, և երեկոյից մինչ ուշ գիշեր, հենց այնպես, ինքն իր համար երգում էր աշուղական երգեր, մեծավասասմբ թրքալեզու: Անուշը՝ Մերգո Պապիկյանը,

գյուղում հարգված մարդ էր: Նայրենական պատերազմի հետքը նրա ձախ ձեռքի պրոթեզն էր: Զարմանք բան էր, թե նա այդ վիճակով ինչպես էր իր փան ու նաև ուրիշների համար սեղան, աթոռ և շաք այլ փայտյա գեղեցիկ իրեր պատրաստում, փորագրումներ անում: Բայց ամենանկատելիին այն էր, որ կուլտիվացիայի խորի և ծղոփի հսկա դեզերը միայն նրա «ճարտարապետությամբ» ու անմիջական մասնակցությամբ էին պատրաստվում: Դեզերը հաճախ մինչև երեսուն մետր բարձրություն էին ունենում: Վերջին պահին, երբ Անուշը պիտի իջներ դեզի վրայից, մի կողմից մյուս կողմ պարան էին գցում, մի կողմից մի քանի հոգի պահում էին, և էն մի կողմից՝ մի ձեռքով պարանից կախ, նա իջնում էր դեզի վրայից: Իսկ դեզը՝ ուղիղ, ինչպես քանոնով գծած, անկյունները համաչափ, փեսքը՝ նայելու արժան:

Անուշն էր մեր գյուղի ամենալավ ձայն ունեցողը, ամենալավ երգողը: Երեկոները կալերում երեխաներով հավաքվում էինք դեզերի փեշերի փակ՝ լսելու նրա երգը, որ փարածվում էր կալերում ու գյուղի երդիկների վրա, ուր մինչ ուշ գիշեր մարդիկ էին նստոյա՝ Անուշի երգին ունկնդիր: Կրկնվող, բայց երբևէ ձանձրույթ չբերող գիշերային այդ յուրօրինակ, ամենօրյա համերգի ավարտից հետո էր միայն գյուղը քուն մտնում:

Ահա այս Անուշին Ակուլը հրավիրեց իր բեմադրության մեջ կարարել աշուղի դերը: Դա այդպես էլ պիտի լինե՝ ուրիշ էլ ու՛մ առաջարկեր, եթե հենց Անուշն էր թրքալեզու մուղամների ամենալավ երգողը գյուղում: Բայց մեր հումորաշար գյուղում, երևի ամենամեծ հումորն այն դարձավ, թե Անուշն ինչ առաջարկեց՝ Ակուլի հրավերին ի պատասխան.

- Էդ դերասանը մենակ երգե՛ պիտի, թե խոսք-մոսք էլ է ասում:

- Նաև խոսելու է,- ուրախ-ուրախ վրա է բերել Ակուլը, մտածելով, թե համաձայնությունը ստանում է:

- Ակուլ ջան, ես խոսել-մոսելու հավաս չունիմ, համ էլ ես պրոթեզով մի քիչ ամոթ է: Արի կլլի, դու էսպես արա՛ մի դերասան դիր թող բեմի վրա խոսք ասի, երգելու վախսը որ գա՛ ես էլ դահլիճից երգեմ:

Այս պատմությունը թեև առել թռել էր գյուղերով մեկ: Ծիծաղել էին, ուրախացել, նույնիսկ առաջարկել իրենց գյուղերից «դերասան փալ»: Բայց Ակուլն էլ, մեր գյուղացիք էլ այդ առաջարկին կարուկ դեմ էին եղել և, բեմադրության բախտով մտաբերված, «պեղումներ» սկսել գյուղում՝ գրնելու մի դերասան, որ «պիտի համ երգի, համ խոսի»: Արոնցին ու գրան Քերոք Բալանյանին: Ակուլն ինքն էլ, իհարկե, Քերոքին ճանաչում էր, ի վերջո համագյուղացիներ են: Սակայն խնդիրն այն էր, որ Քերոքը մարդկանց ներկայությամբ երբևէ չէր երգել. այդ գաղտնիքը բացել էր հարևան Էդոն (սա այդ մարդու մականունն է՝ գյուղում նրա ճիշտ անունը ոչ ոք չգիտի), որի փանը, իր ծնունդին, Քերոքը «էնպես լավ երգեր է երգել»: Այսպես, Քերոքը ստանձնեց գլխավոր դերը: Բեմադրությունը կայացավ: Երկու օր իրար հետևից մեր գյուղում ներկայացվեց և, քննություն բռնելով, հյուրախաղերի մեկնեց հարևան գյուղեր: Այս փաստն առավել թունդ ու անզիջում դարձրեց պայքարը Ակուլի և Արեվյանի միջև: Նա՛ Ծղալթեփիլայում, Ակուլը՝ մեր գյուղում ներկայացումներ է, որ բեմադրում էին:

- Էսպես որ երթա՛ ժողովրդականի կոչում էլ կստանանք,-կատակում էին մեր գյուղացիները:

- Էս չիֆլիքցիք փվել-անցել են մեզնից,-առանց չարության ասում էին նոշենցիք:

Այսպես էին ապրում մեր գյուղի մարդիկ՝ իրար հետ ջերմ, սիրալիր, իրենց ազատ օրերի պարասությունը լրացնելով միմյանց հոգիների հետ խաղալով, մականուններով իրար դիմելով ու նոր մականուններ հորինելով, իրենց թափոնով, իրենց սրամիտ ասել-խոսելով, որոնք թե հավաքեինք, բանահյուսության, հեքիաթասացության հրաշալի նմուշներ էին: Ականջդ կանչի, Միմոն Պապիկյան, որ գյուղի պատմությունն էս ուզում գրել, խնդրում եմ այս ամենը նկատի ունենաս:

Այդ երկու գյուղերը՝ Զուլդան ու Ծղալթեփիլան, այնպե՛ղ՝ պատմական Նայաստանում, իրար կողքի են եղել: Նիմա էլ ոչ միայն մերոնք ու Ծղալթեփիլացիք, այլև հարևան գյուղերի բնակիչներն այդ երկու գյուղերը հին անուններով են կոչում՝ մեր գյուղը՝ Չիֆթիլիկ, Ծղալթեփիլան՝ Նորշեն. նոշենցիք, չիֆթիլցիք:

Չիֆթիկն ավելի մեծ գյուղ է եղել՝ երկու եկեղեցիներով: Երբ գաղթել են, դարձյալ իրար կողքի են քանակորվել: Նորշենից, հավանաբար, ավելի շատ մարդիկ են եկել, որ հիմա այդ գյուղն ավելի մեծ է, քան Զուլդան: Դրա համար է, երևի, որ եկեղեցին կառուցել են Նորշենի հողերի վրա՝ երկու գյուղերի արանքում: Կառուցել են միասին: Սա նկատի չէր ունեցել Նորշենի մասին գիրք գրողը, երբ թյուրիմացաբար շեշտել էր, թե Ծղալթբիլան ունի իր եկեղեցին, Զուլդան՝ չունի: Մեր գյուղացիք էլ հակադարձել էին. «Դե որ դուք պարսկական անցյալը մոռանում եք, ուրեմն երկու գյուղերի համար մեր հողերի վրա կառուցած դպրոցն էլ մեր դպրոցն է»: Բանն իհարկե վեճի չի հասնում, պարզապես ասվող-խոսվող թեմա է:

Կարգերի փոխվելուց հետո, երբ պահեստի վերածված եկեղեցին բացեց իր դռները, Կաթուղիկ եկեղեցին փեր կանգնեց իր հոփին և երկու գյուղերի հավաքավորներին Վարդապետ ուղարկեց ծառայության: Օրհնյալ է հոգևորականի ներկայությունը՝ այլևս կարգը կարգին արվում են պսակադրության ու թաղումների ծեսերը: Նիմա Զուլդայում նոր եկեղեցի է կառուցվում՝ Կաթուղիկ եկեղեցու ներդրումներով ու գյուղացիների ուժերով:

...Տղաները ձայնեցին, թե՛ արդեն գնում ենք: Սամվելը վերջին պահին լուսանկարեց ինձ՝ առաջին պլանում ես, հեռվում՝ իրար կպած մեր հինգ գյուղերը:

Սահմանազրկի թուրքական առաջին գյուղը Փոսովն է: Այն երևում է մեր գյուղից: Փոքր ժամանակ, հիշում եմ, երեկոյան կողմ բարձրանում էինք անփառի փեշը և դիպում այդ գյուղը: Բոլոր փներից երեկոյան ժամերին ծուխ էր բարձրանում. մեր գյուղի փարիքավորներն ասում էին, թե թուրքերն իրիկունն են հաց թխում: Ամենայն մանրամասնությամբ երևում էին գյուղի բոլոր փները, դրանցից դուրս ու ներս անող մարդիկ, գյուղամեջ ջրի գնացող-եկող աղջիկները՝ ուսափայտերին զույգ դույլեր կախած, երևում էին գյուղի ձերունիները՝ գյուղի կենտրոնի փաշալմա մեծ ծառի տակ նստած: Խնձորի այդ տեսակից մեր գյուղում էլ կա. հավանաբար այն ժամանակներում փոխանակել: Փաշալմա թուրքերեն նշանակում է փաշայի խնձոր կամ խնձորների փաշա:

Սահմանամերձ Փոսով գյուղից սկսվող վերելքն ավարտվում է ծովի մակերևույթից 2540 մետր բարձրության սարի վրա, որտեղից արդեն վայրէջքն է դեպի Կարս: Նանդիպակաց սարահարթի մեր գյուղերն աստիճանաբար անհետացան տեսադաշտից: Առջևում երկու հարյուր կիլոմետր ճանապարհն է մինչև Կարս:

Ներքևում, երկու պետությունների սահմանաբաժան Փոցխով գետն էր գալարվում ձորերի մեջ, որտեղ կամուրջն էր՝ երեք կամարներից մեր սահմանի կողմինը բանդված: Մինչև պետական սահմանի կառուցումը, այդ կամուրջը գործել է: Նայրս պարսում էր, որ հաճախ էին այդ կամուրջով գնում Արդահանի կողմերը՝ առևտրի: Այդ ընթացքում էր նա թուրքերեն սովորել և եղբայրներին հաճախ ասում էր. «Սովորեք այդ լեզուն, ձեզ պետք կգա. էսպես հո չի մնա, մի օր կբացվի էդ ճամփեն»: Նայրս լիներ հիմա, հետդարձիս մտնելի մեր գյուղ, նրան պարսկերենի բացված ճամփեքի մասին: Չնայած, նա ճամփեքի բացվելու այս տարբերակը նկատի չունեի:

Էհ...